**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՄԵՆ**
**SPECIAL TOPIC: AMEN**

I. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

Ա. «Ամեն» տերմինը ծագել է Եբրայերեն հետևյալ բառերից՝
1. «ճշմարտություն» (*emeth,* BDB 49)
2. «ճշմարտացիություն» (*emun, emunah,* BDB 53)
3. «հավատք» կամ «հավատարմություն»
4. «վստահություն» (*dmn,* BDB 52)

Բ. Այս տերմինի ստուգաբանությունը նշում է մարդու ֆիզիկական կայուն վիճակը: Դրա հակառակը կլիներ անկայունը, սայթաքելին (տես՝ Սաղմ. 35:6, 40:2, 73:18, Երեմիա 23:12) կամ գայթակղիչը (տես՝ Սաղմ. 73:2): Այս բառացի կիրառությունից էլ ձևավորվել է հավատարիմ, վստահելի, ազնիվ և հուսալի բառերի լայնիմաստ փոխաբերությունը (տես՝ Եբր. 2:4):

Գ. Հատուկ կիրառությունը (տես՝ <u>Հատուկ Թեմա. Հավատալ, Վստահել, Հավատք և Հավատարմություն ՀԿ-ում</u>)
1. Սյուն, 4 Թագ. 18:16 (1 Տիմ. 3:15)
2. Վստահություն, Ելից 17:12
3. Կայունություն, Ելից 17:12
4. Հաստատություն, Ես. 33:6
5. Ճշմարիտ, 3 Թագ. 10:6, 17:24, 22:16, Առակ. 12:22
6. Հաստատ, 2 Մնաց. 20:20, Եսայի 7:9
7. Վստահելի (Թորա), Սաղմ. 119:43,142,151,160

Դ. ՀԿ-ում երկու այլ տերմիններ են կիրառվում գործող հավատքի համար՝
1. *batach* (BDB 105), վստահություն
2. *yra* (BDB 431), վախ, հարգանք, երկրպագություն (տես՝ Ծննդ. 22:12)

Ե. Վստահության կամ վստահելիության նշանակությունից ձևավորվեց եկեղեցական կիրառությունը, որը գործածվում էր հաստատելու մեկ ուրիշի ճշմարիտ կամ վստահելի հայտարարությունը (տես՝ Թվոց 5:22, 2 Օր. 27:15-26, 3 Թագ. 1:36, 1 Մնաց. 16:36, Նեեմ. 5:13, 8:6, Սաղմ. 41:13, 72:19, 89:52, 106:48, Երեմ. 11:5, 28:6):

Զ. Այս տերմինի հետ կապված աստվածաբանական բանալին մարդկության հավատարմությունը չէ, այլ ՅԱՀՎԵի (տես՝ Ելից 34:6, 2 Օր. 32:4, Սաղմ. 108:4, 115:1, 117:2, 138:2): Մեղավոր մարդկության միակ հույսը ՅԱՀՎԵի և Նրա խոստումների գթառատ, նվիրված, ուխտի հավատարմությունն է: Ովքեր ճանաչում են ՅԱՀՎԵին, պետք է լինեն Նրա նման (տես՝ Ամբ. 2:4): Աստվածաշունչը մարդկության մեջ Իր պատկերը (տես՝ Ծննդ. 1:26-27) վերականգնելու Աստծո պատմությունն ու արձանագրությունն է: Փրկությունը վերականգնում է մարդկության հնարավորությունը Աստծո հետ մտերմիկ հարաբերություն ունենալու: Սա է մեր ստեղծվելու նպատակը:

II. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Ա. «Ամեն» բառի ՆԿ-ում ընդունված է կիրառել որպես հայտարարության ճշմարտացիության ամփոփիչ եկեղեցական հաստատում (1 Կորնթ. 14:16, Հայտն. 1:7, 5:14, 7:12):

Բ. ՆԿ-ում այս տերմինը ընդունված է կիրառել որպես աղոթքի փակման բառ (տես՝ Հռոմ. 1:25, 9:5, 11:36, 16:27, Գաղ. 1:5, 6:18, Եփես. 3:21, Փիլ. 4:20, 2 Թեսաղ. 3:18, 1 Տիմ. 1:17, 6:16, 2 Տիմ. 4:18):

Գ. Հիսուսը միակն էր, որ այս տերմինը կիրառեց (կրկնապատիկ անգամ Հովհաննես Ավետարանում՝ 25 անգամ, այսինքն՝ Հովհ. 1:51, 3:3,5,11, և այլն) ներկայացնելու կարևորագույն հայտարարությունները (տես՝ Ղուկ. 4:24, 12:37, 18:17,29, 21:32, 23:43):

Դ. Այն Հայտն. 3:14-ում կիրառվում է որպես Հիսուսի անուններից մեկը (նաև ուշադրություն դարձրեք 2 Կորնթ. 1:20, հավանաբար ՅԱՀՎԵի անուններից՝ Ես. 65:16):

Ե. Հավատարմության կամ հավատքի, վստահելիության կամ վստահության գաղափարն արտահայտվում է հունարեն *pistos* կամ *pistis* տերմինով, որն անգլերենում թարգմանվում է որպես «վստահություն», «հավատք», «հավատալ» (տես՝ Հատուկ Թեմա. Հավատք, Հավատալ կամ Վստահություն):